

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՄՐՑՈՒՅԹ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության առաջատար պաշտոնների խմբի երրորդ ենթախմբի ներքոգրյալ թափուր պաշտոնն զբաղեցնելու համար

| Համայնքային ծառայության թափուր պաշտոնի անվանումը | Պաշտոնի անձնագրի ծածկագիր | Նշված թափուր պաշտոնի անձնագրով սահմանված հիմնական գործառույթների նկարագիրը | Նշված թափուր պաշտոնի անձնագրով այդ պաշտոնը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետմանը ներկայացվող պահանջները | Պահանջվող փաստաթղթերը |
|---|---------------------------|---|--|---|
| Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի տրանսպորտի բաժնի գլխավոր մասնագետ | 2.3-41 | <p>Բաժնի գլխավոր մասնագետը՝</p> <p>1) կատարում է բաժնի պետի հանձնարարությունները՝ ժամանակին և պատշաճ որակով,</p> <p>2) իր կողմից մշակված իրավական ակտերի նախագծերի, ծրագրային փաստաթղթերի և նյութերի փորձաքննության ուղարկելու անհրաժեշտության մասին առաջարկություններ է ներկայացնում բաժնի պետին,</p> <p>3) անհրաժեշտության դեպքում, բաժնի պետի համաձայնությամբ կամ հանձնարարությամբ, մասնակցում է համապատասխան տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների կողմից կազմակերպվող ըննալումներին և այլ միջոցառումներին,</p> <p>4) անհրաժեշտության դեպքում, իր լիազորությունների սահմաններում նախապատրաստում և բաժնի պետի պետին է ներկայացնում սառաջրկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, միջնորդագրեր, զեկուցագրեր և այլ գրություններ,</p> <p>5) իրականացնում է քաղաքացիների դիմումների սահմանված կարգով քննարկումը և արդյունքները ներկայացնում է բաժնի պետին,</p> <p>6) ստորագրում է իր կողմից պատրաստվող փաստաթղթերը,</p> <p>7) կատարում է համայնքային ենթակայության ճանապարհների վրա ճանապարհային անվտանգ երթևեկության ապահովման համար անհրաժեշտ աշխատանքներ և համայնքի ազգաբնակչության սպասարկումը բարեկավելու նպատակով ներհամայնքային երթուղիների կանգաները կահավորում է պատշաճ մակարդակով,</p> <p>8) կատարում է համայնքի հասարակական տրանսպորտի աշխատանքն ու համայնքային ենթակայության տրանսպորտային հիմնարկների և կազմակերպությունների գործունեության կազմակերպման և կառավարման համար անհրաժեշտ աշխատանքներ,</p> <p>9) կատարում է համայնքի հասարակական տրանսպորտի աշխատանքն ու համայնքային ենթակայության տրանսպորտային հիմնարկների և կազմակերպությունների գործունեության կազմակերպման և կառավարման համար</p> | <p>Բաժնի գլխավոր մասնագետը՝</p> <p>1) ունի բարձրագույն կրթություն, համայնքային ծառայության կամ պետական ծառայության պաշտոններում առնվազն երկու տարվա ստաժ կամ վերջին երեք տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ կամ վերջին ուր տարվա ընթացքում համայնքի ավագանու անդամի աշխատանքային գործունեության առնվազն երկու տարվա փորձ կամ առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ:</p> <p>2) ունի «Համայնքային ծառայության մասին», «Տեղական ինքնակառավարման մասին», «Նորմատիվ իրավական ակտերի մասին», «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների, աշխատակազմի կանոնադրության և իր լիազորությունների հետ կապված իրավական այլ ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամարանելու, տարեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն,</p> <p>3) տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը,</p> <p>4) ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն,</p> <p>5) տիրապետում է ուստեղեն լեզվին (ազգային):</p> | <p>Համայնքային ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով ներկայացվող պահանջները բավարարող, հայերենին տիրապետող, 18 տարին լրացած Հայաստանի Հանրապետության քաղաքացիները և Հայաստանի Հանրապետությունում փախստականի կարգավիճակ ունեցող անձինք պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը (բնօրինակների հետ միասին):</p> <p>1) գրավոր դիմում /ձևը լրացվում է տեղում/.</p> <p>2) բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթղթի /դիպլոմի/ և աշխատանքային գրքովկի պատճենները.</p> <p>3) արևական ժողովում կամ դրան նաև գիտարկության ժողովում աշխատանքային գրքում կամ համապատասխան տեղեկանք.</p> <p>4) հայտարարությունները /լրացվում են տեղում/.</p> <p>5) 1 լրամասկար՝ 3x4 ամ չափահան.</p> <p>6) անձնագրի պատճենը:</p> <p>Փաստաթղթերը ներկայացնել անձամբ</p> |

| | | | |
|---|--|---|--|
| | <p>անհրաժեշտ աշխատանքներ,</p> <p>10) կատարում է ոլորտում իրականացվող աշխատանքների նկատմամբ վերահսկողության հրականացման համար անհրաժեշտ աշխատանքներ,</p> <p>11) սահմանված կարգով նախապատրաստում և ներկայացնում է համայնքի ավագանու որոշումների, համայնքի ղեկավարի որոշումների և կարգադրությունների, աշխատակազմի քարտուղարի հրամանների, ոլորտին վերաբերող ծրագրային փաստաթուղթերի, պետական մարմինների, իրավաբանական և ֆիզիկական անձանց գրությունների նախագծեր, կազմում է համայնքի զարգացման ծրագրի համապատասխան ոլորտի նախագիծը և մասնակցում է համայնքային սեփականության գույքագրման աշխատանքներին,</p> <p>12) հսուակեցնում և կանոնավորում է երթուղիների աշխատաժամերը,</p> <p>13) կատարում է մոնիթորինգ համայնքի վատ կամ չսպասարկվող տարածքներում նոր երթուղիներ շահագործելու նպատակով,</p> <p>14) երթուղիներում երթերը կանոնավորելու և վարորդների առողջական ու սանիտարահիգիենիկ վիճակը վերահսկելու նպատակով պարերաբար կատարում է ստուգումներ երթակարգավորման և բուժզննման կետերում,</p> <p>15) << կառավարության 2001թ. օգոստոսի 16-ի թիվ 762 որոշման համաձայն մասնակցում է համայնքային թափուր երթուղիների համար մրցույթների կազմակերպման աշխատանքներին,</p> <p>16) կատարում է համայնքի ղեկավարի և աշխատակազմի քարտուղարի հանձնարարականները, ինչպես նաև << օրենսդրությամբ, այլ իրավական ակտերով նախատեսված այլ աշխատանքներ,</p> <p>17) իրականացնում է օրենքով, իրավական ակտերով սահմանված այլ լիազորություններ:</p> <p>Բանի գլխավոր մասնագետն ունի օրենքով, իրավական այլ ակտերով նախատեսված այլ իրավունքներ և կրում է այդ ակտերով նախատեսված այլ պարտականություններ:</p> | | |
| Ույթներն անցկացնելու օրը, ժամը, վայրը թվականի հոկտեմբերի 22-ին ժամը՝ 11:00 վայրը՝ ք. Գյումրի, Վարդանանց հր. 1 ումրու համայնքապետարան 3-րդ հարկ, նիստերի դահլիճ | Փաստաթուղթի ընդունումը | Դիմումների և փաստաթուղթերի ներկայացման վերջնաժամկետը | |
| թվականի հոկտեմբերի 22-ին ժամը՝ 11:00 վայրը՝ ք. Գյումրի, Վարդանանց հր. 1 ումրու համայնքապետարան 3-րդ հարկ, նիստերի դահլիճ | Փաստաթուղթերը ներկայացնելու, լրացուցիչ տեղեկություններ ստանալու, պաշտոնի անձնագիրը և հարցաշարերը ստանալու համար դիմել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի անձնակազմի կառավարման բաժին (3-րդ հարկ, հեռ. 0312-2-22-18), << Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀ վարչություն (1-ին հարկ, հեռ.՝ 0312-49000-147): Փաստաթուղթերի ընդունումը՝ ամեն օր, ժամը 09:00 – 18:00, բացի շաբաթը և կիրակի օրերից | 2019 թվականի հոկտեմբերի 07-ը ներառյալ | |

Աշխատակազմի քարտուղար՝



Ռ.ԱՍԱՏՐՅԱՆ